ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԴԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հասցեն Արարատի մարզ, գյուղ Դիտակ 4 դեկտեմբերի 2013թ.

12-Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԴԻՏԱԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական տուրքերի և վճարների մասին ,,
Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ- Հաստատել Դիտակ գյուղական համայնքի 2014թ-ի
տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետա-շինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական շինություն) տեղադրման թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար

1) մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7500 դրամ

2) սույն կետի <<1>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար

ա) 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 20000 դրամ
բ) 501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար – 25000 դրամ
գ) 1001-ից և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 25000 դրամ

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

3) մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1500 դրամ
4) 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 2500 դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման , ուժեղացման , վերականգնման , արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքերի գաբարիտա չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն -3000 դրամ

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար, տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինության ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 3000 դրամ
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 3000 դրամ

5. Համայնքի տարածքում բացօթյա վաճառքի կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է՝

5.1 գազի և վառելիքաքսայուղային նյութերի համար , ընթացիկ տարվա համար 150000դրամ

5.2 գյուղատնտեսական մթերքների համար յուրաքանչյուր օրվա, քմ-ի համար . 350 դրամ

Տեղական վճարներ

1. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկօրինակներ տրամադրելու համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել 500 դրամ

2. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու համար մասնակիցներից վճար սահմանել 3000 դրամ

3. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու և վարձակալական հիմունքներով տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 500 դրամ

4. Համայնքի աղբահանության վճար սահմանել մեկ շնչի հաշվով տարեկան 120 դրամ

Ավագանի կողմ Ս.Հովհաննիսյան
կողմ Մ.Սարգսյան
կողմ Վ.Հովհաննիսյան
կողմ Ա.Խաչատրյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՍՐԱՊՈՅԱՆ